



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՊԵՏՐՈՒՍՅԱՆ

Մհամ ՊԱՏՐԱՍ

ՊԱՏՄՎԱԾՔ



891.99 Մ

Դ-50

ՀԽՍՀ ԿԱՆԱԿԱԴՐԱՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾ

ԽԱՐԱՐԵԸ և ՏԱՐԻԿԸ Ա. ՄԱՆՈՒՔԻՆՅԱՆ

ՊԵՏՏՈՎԱԾ

1932 ՅԵՐԵՎԱՆ

891.995
Q-50

30 MAY 2011

CA 32-71
4



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՄԻՃՏ ՊԱՏՐԱՍ

Մարգոն ու Արփոն յերկրորդ խմբի աշակերտուհիներ եյին։ Նրանք սրտով ուզում եյին պիոներ դառնալ, բայց մայրը, հայրը, մանավանդ պառավ տատը, լսել անգամ չեյին ուզում։

— Ի՞նչ ե, հարևանի աղջկերանց ու տղաների պես զիշեր-ցերեկ ուզում եք կորած լինել, — ասում եք մայրը։

— Յերեխաների գլխից ձեռք վերցրեք ու պրծեք,—
փնթփնթում եր պառավը:

Հայրը, զոր մի մեծ գործարանի հաշվապահ եր.
նույնպես վրդովկում եր.—Հաց ունիք, կերեք ու տեղ-
ներդ վեր ընկեր, փողոցները շափշփելուց ի՞նչ պիտի
սովորեք.

Յերեխաները լաց ելին լինում ու աղերսում մորը,
զոր թույլ տա:

Բայց նա միշտ մերժում եր.

Կմեծանաք, խելքներդ գլուխներդ կհավաքեք, են
ժամանակ ինչ սրտներդ ուզի, են ել արեք. իսկ հիմա-
քանի մեր խնամքի տակ եք, ինչպես ասում ենք, են-
պես ել արեք, — բղավում եր մայրը յերեխաների վրա՝

Յերեխաները ճարահատակ դիմում ելին պառավին:

— Տատի ջան, ինչ կինի, զոր թողնեք. սաղ աշ-
խարհիս յերեխաները պիոներ են դառել... Ենպես լավ
են, ենպես լավ են նրանց մոտ...

Տատիկը, զոր յերեխաներին անշափ սիրում եր, այս
դեպքում քար եր դառել, լսել անգամ չեր ուզում:

— Զե, բարես, չե, աստված վոչ անի յերեխան
պիոներ դառնա... մենք անտեր յերեխաներ չունենք.

Յերեխաները հուսահատ նայում ելին տատիկին,
փարզում նրա վզովը, բայց բան չեր դուրս գալիս.

Ամեն որ տան խոսակցության նյութն այդ եր՝ թե
ճաշի ժամանակ, թե թելին, թե դուրսը, թե աանը մա-
նավանդ, յերը պիոներական խմբերը շարվեցար. կար-
միր դրոշը պարզած, թմբուկների ու փողերի համաշափ
տակտով անցնում ելին նրանց տան մոտով.

— Այ, տեսեք, ի՞նչ լավ յերեխաներ են... ի՞նչ ե,
մենք ինչով ենք նրանցից ավելի... Տանից ուսումնարա-
րան, ենտեղից տուն, ամբողջ որը փակված չոր ս պատե-
րի մեջ,—տրտնջում ելին նրանք. բայց նրանց լաց ու
կոծին, նրանց աղերսանքին վոչ վոք ուշադրություն չեր
դարձնում. Մի որ առջև, եղ պամիկ ելի յերկար խոսե-



լուց հետո, յերեխաները մի կուշտ լաց յեղան ու վորոշեցին ծածուկ, առանց ծնողների զիտության, անցնեն պիոներների շաբթերը:

Առավոտյան նրանք շատ վաղ վերկացան, ու շարունակ իրար հետ քչփշում եյին ու վորոշում, վոր դասերից հետո գնան պիոներների կոլեկտիվը, ամենինչ պատմեն ու խնդրեն, վոր իրենց ընդունեն պիոներ:

Նրանց բախտից այդ որն ուսումնարանից շուտ ազատվեցին ու իրենց յերկու պիոներ ընկերութիւնների ուղեկցությամբ գնացին ուղղակի կոլեկտիվ:

Սյստեղ նրանք անհամարձակ իրենց ցավը պատմեցին կոլվարին, — ասացին, վոր սրտով ուղում են պիոներ դառնալ, բայց ծնողները չեն թողնում. Ասացին, վոր ծածուկ յեկել են, խնդրում են ընդունել իրանց:

Կոլվարը ժպտաց, ապա արկղից հանեց մի թերթ թուղթ, գրեց դիմումի համար պահանջված բողոր հարցերի պատասխանները, ապա դարձավ յերեխաներին և ասաց.

— Տեսէք, յերեխաներ, սրանից հետո դուք պետք ելավ սովորեք, որինակելի լինեք թե ուսումնարանում և թե մանավանդ տանը, աշխատեցեք միշտ ոգնել ձեր մորը, կատարել տան սև աշխատանքները. պիոներները պետք ե ամեն ինչ իմանան. Վաղի ժամի հինգին, կոլեկտիվի ժողովին ձեր դիմումը կըննենք:

Յերեխաներն ստորագրեցին դիմումը, նայեցին կոլվարին ու գոհ սրտով շտապեցին տուն:

Են փոքրիկ թերթիկը, ծուռ ու մուռ գրած տողերով ու թղթի վրա իրանց ստորագրությունը, մի առանձին վոգերություն եր պատճառում նրանց:

Հասան տուն:



Սովորականի պես գրքերը չփաթեթեցին ու չվագեցին խոհանոց, չընկան տատիկի ու մոր վկույն ու չպատմեցին ուսումնարանի անց ու դարձից. Սկսեցին սենյակի թափված իրերը հալաքել գրասեղանները կարգի գցել, ապա դասագրքերն առան ու սկսեցին պարապել դասերով:

Յերբ մայրը խոհանոցից տուն յեկավ, զարմացած նայեց յերեխաներին ու աշերին չեր հավատում. սենյակները մաքուր հավաքած, ամեն ինչ կարգի բերված, իրանք ել գլուխները կախ՝ լուրջ պարապում եյին:

— Այ, եղպես, ի՞նչ խելոքացել եք:

Յերեխաներն աշեի տակով իրար նայեցին ու իրանց հազիվ զսպելով, նորից խորասուզվեցին պարապմունքների մեջ:

Տատիկն ել հարեւան սենյակից գուլպան գործելով ու ճաղերը ձեռքին, ակնոցները ճակատը քաշած, ներս

մտավ ու տեսնելով յերեխաներին հանգիստ նստած՝ զարմացած մոտեցավ նրանց ու ասաց.

— Յեկել եք, բալիկներս...

— Զե, տատիկ, չենք յեկել. ծիծաղելով ասաց Արփոն, տեղիցը ցատկեց, մի ակնթարթում տատիկի ակնոցները պոկեց ճակատից, դրեց աչքերին ու ձեռքերը յետև դրած, նրա պես կռացած՝ սկսեց սենյակում տնը բոնքալով ման գալ:

Տատիկը գնում եր նրա յետնից ակնոցները խլելու նպատակով, բայց չեր հասնում.

— Արփո, խելքդ թոցրիր, մոռացար վոր... խիստ-խիստ նայեց Մարգոն ու տեղիցը վեր կացավ.

— Հանաք եմ անում, տատիկ ջան, հանաք, ահա, առ, ու մեկնեց ակնոցները տատիկին, ուզում եր փար-փել վզովք, բայց իրան զսպեց, նորից նոտեց տեղն ու սկսեց պարապել:

Հայրը ծառայությունից առւն յեկավ. Նա յել զար-մացավ. յերբ տեսավ, վոր յերեխաները հանգիստ նստած դաս եին սովորում. Բան չասաց, գնաց լվացվեց:

Նստեցին ճաշելու. Սովորաբար ճաշելիս աղջիկները խոսում եին շարունակ պիտներ դառնաբու մասին, բայց այդ որը նրանք վոչ մի խոսք չանացին. Մարգոն սկսեց սեղանը հավաքել Արփոն ել ավելն առավ ձեռքը և սկսեց հատամին ավել:

Մայրը գովեց յերեխաներին ու գոհ սրտով գնաց խոհանոց:

— Գիտես, Մարգո, մենք շատ անպիտան, վատ յե-րեխաներ ենք, մայրիկին խաբում ենք. Դու տեսար, ինչ-պես նա գովեց մեզ. Նա կարծում ե, վոր մենք ել պի-տներ չենք ուզում դառնալ. Յերբ վոր մեզ գովում եր, բիշ եր մնում գրկեյի մայրիկին ու ասեյի. — Մենք գրվել ենք... մենք ձեզ խարում ենք... պիտներ ենք դառել...

— Հիմար, մայրիկին բան չասես: մեկ ել տեսար գնաց կոլեկտիվ ու բողոքեց:

Արփոն լուրջ դեմք ընդունած՝ նայեց մեծ քրոջն ու յուեց:

Մյուս որն ուսումնարանում, նրանք իրենց պահում եյին վերին աստիճանի՝ որինակելի ու հանգիստ:

Վարժուհին նայում եր յերեկվա պեծ ու կրակ Մար-գոյին, վոր ամբողջ դասարանը տակն ու վրա յեր ա-նում, և չեր հավատում իր աչքերին:

Մարգոյին դաս հարցնելուց հետո, դիմեց փոքր քրոջը.

— Ապա, Արփո, մի դու յել արի գրատախ-տակի մոտ տեսնեմ, մեծ քրոջիցդ հո հետ չես մնա-ցել:

Արփոն ավելի հաս-տատ ու վստահ քայլե-րով մոտեցավ գրատախ-տակին, կավիճն առավ, շեշտակինայեց վարժու-հուն ու կարծես ասում եր. — Զե՞ վոր այժմ յես պիտներ եմ. «միշտ պատ-րաստ»...

Բայց նա կարծես մի փոքր շփոթվեց. Նայեց մեծ քրոջը, հիշեց յերեկ-վա կոլեկտիվի կոլվարին ու սկսեց վստահ պատաս-խանել վարժուհու բոլոր հարցերին:

— Ապրես, փոքրիկս, տեսնում եմ քրոջիցդ յետ չես մնում, — ասաց վարժու-հին և սիրալիր նայեց նրան,



Այդ որը ճաշից հետո, մի-մի գիրք առած թևի տակ,
նրանք զիմեցին մորը:

— Մենք գնում ենք կոլե... ըհ... գնում ենք ու-
սումնարան... Վարժուհին մեզ կանչել ե...

Մայրը կասկածանքով նայեց յերեխաներին ու բար-
կացած հարցրեց.

— Ես ժամին վարժուհին ինչու պիտի կանչեր ձեզ:

— Մենք... մենք... պետք ե... սկսեց Մարգոն, բայց
կարկամեց:

Իսկ Սրբոն մինչև ականջները կարմրեց...

— Եերկի ելի ընկերուհիների մոտ եք հազրվել, —
ասաց մայրը ու խիստ-խիստ նայեց Սրբոյին:

— Կոչ, մայրիկ, ուսումնարան ենք գնում, սրանից
հետո յել շաբաթը մեկ անգամ պետք ե գնանք, — խոսեց
Սրբոն ու կանգ առավ:

— Վարժուհին եղանակ ե ասել, շաբաթը մի անգամ
պետք ե գնանք, — ավելացրեց Մարգոն:

— Լավ, գնացեք, միայն շուտ յեկեք, չուշանաք:

— Չե... մայրիկ... վախեցած կարկամեց Սրբոն ու
նայեց Մարգոյին:

— Չենք ուշանալ, մայրիկ, շուտով կգանք, — ասաց
Մարգոն ու խիստ-խիստ նայեց քրոջը, վոր լռե:

Ճանապարհին Սրբոն քրոջը կանգնեցրեց.

— Բա վոր մայրիկը գա, վարժուհուն հարցնի:

— Ի՞նչ պիտի ասենք, — տխուր-տխուր նայեց Մար-
գոն, — կասենք... կասենք... ուզեց մի բան հնարել, բայց
չկարողացավ:

— Կասենք Սիրոյի մօտ եյինք, — քրոջը դժվարու-
թյունից հանելու համար, խոսեց Սրբոն:

— Դու յել բան ասացիր, չե՞ վոր մենք ասացին
վարժուհու մոտ ենք գնում:

— Բա ի՞նչ անենք... արի վարժուհուն ասենք, որ
մայրիկը յերբ գա, իրան հարցնի, թող եղանակ ել ու ի,
վոր մենք իր մոտ եյինք:



Հա, դա լավ կլինի, ասաց Մարգոն, ու սկսեցին շարունակել իրենց ճանապարհը։ Բայց միքանի բայլ անելուց հետո նորից կանգ առան։

— Չե, Արփո, վարժուհին սուտ չի խոսի։ արի յետ գնանք տուն։ Արփոն հուսահատ նայեց քրոջն ու քայլերն ուղղեց դեպի տուն։

— Սպասիր, ուր ես գնում։ մայրիկը վարժուհու մոտ չի գնա։

— Իսկ յեթե գնա, են ժամանակ։

— Են ժամանակ մենք ել կասենք, կոլեկտիվ եյխը գնացել, պիոներ ենք գրվել։

— Հետո։

— Հետո, հետո... չե վոր մի որ պիտի իմանա, ասաց Մարգոն ու քրոջ թեև առած գնացին կոլեկտիվ։

Այնտեղ հավաքվել եյխն պիոներները և ուրախ ուրախ խաղում, վազգում եյխն։

— Ո՞ւ... Մարգո... Արփո... բարեւ բարեւ, այ, ի՞նչ լավ եք արեք։ Սրանից հետո միշտ միասին կխաղանք, կվաղվինք։ Կոովորենք։ Տղա-աղջիկ թափվել եյխն նրանց գլխին և զանազան հարցեր եյխն տալիս ու այս ու այն կողմ քաշըցում։

Կովկասի առաջնորդությամբ Մարգոն ու Արփոն շըրջեցին պիոներական ակումբի բոլոր մասերը և արհեստանոցները։

Նրանք ուշադրությամբ նայում ու հիանում եյխն։

— Մարգո, դու ի՞նչ արհեստ պետք ե ընտրես քեզ համար։

Զգիտեմ, կմտածեմ։ Յես սիրում եմ ելեկարականություն։

— Իսկ դու, Արփո։

— Յես, նկարչություն ու ջութակի վրա նվազել։

— Ա՛, եղ յերկուսը միասին շատ դժվար ե սովորել։

— Վրշինչ, ուրախ բացականչեց Արփոն, յես բիշ ու միշ նկարում եմ և մանգոլինի վրա յել նվազում։

Այդ խոսակցության ժամանակ լսվեց փոքրիկ զանգի զնզնզնզոցը։

Պիոներները զույգ-զույգ կանգնած մտան ընդարձակ դահլիճը։ Որփա հերոսներն այդ յերկու քույրերն եյխն։ նրանք առանձնացած, գլխիկոր կանգնած սպասում եյխն իրենց դատավճուն։

Կոլվարը ժողովը բացված համարելով, մի փոքրիկ նախաբանից հետո, թղթապանակից հանեց Մարգոյի և Արփոյի դիմումը ու բարձր ձայնով կարդաց։ Ապա գովեց նրանց այս քայլը, հուսալով, վոր նրանք իրանց ջամասիրությամբ, ակտիվ աշխատանքով պիոներական ընտանիքի արժանի անդամ կարող են դառնալ։

Աղմկալից ծափահարությունների տակ՝ պիոներներներն ընդունեցին նըրանց իրենց շարքերը։

Արդեն ճրագները վառվում եյխն, յերբ Մարգոն ու Արփոն տուն յեկան։ Մայրն ու տատիկը դիմավորեցին ու տեսնելով նրանց սիրահույզ հայացքը, հանդիմանական վոչ մի խոսք չասացին։ Պառավը նույնիսկ զրկեց ու համբուրեց նրանց։

— Լավ պըծանք, — ասաց Մարգոն, զփոթված նայելով Արփոյին։

Արփոն վոչինչ չկուրողացավ ատել բիշոջի միայն իր բարի աշքերը դարձեց նրան ու կար-



ԺԵՄ ասում եր՝ «մինևշ յԵՐԵ պետք ե Խարենք մեր ծնող-նելին»:

ՑԵՐԵԽԱՆԵՐԸ՝ ամեն կերպ աշխատում եյին առիթ չտալ ծնողներին տրանջալու։ Այժմ վոչ միայն դասերն ու տան սովորական գործերն եյին կատարում, այլ ոգնում եյին մորը լվացը անելու։ Չուր եյին բերում, ջուր եյին թափում, վորբիկ կտորներն իրենք լվանում։ Տունը, դագիթը, պատուհաններն այսպես եյին մաքրել, փայլեցրել, վոր հարեաններն անգամ զարմացել եյին։

Ծնողներն անշափ գոհ եյին և վերին աստիճանի բախտավոր եյին զգում իրենց և միենույն ժամանակ զարմանում ու չեյին հասկանում, թե ինչու այդպես հանկարծ փոխվեցին և որինակելի դարձան իրենց յԵՐԵԽԱՆԵՐԸ։

ՑԵՐԿՈՒ փոքրիկները քնելուց առաջ լվացվում, հագուստները խնամքով կախում եյին իրենց տեղը։ Առավոտները վեր եյին չենում շատ վաղ, մարզանը կատարում, դասերը նորից աչքի անցկացնում ու ժամանակից մի կես ժամ ել շուտ, գրքերն առնում, ուսումնարան շտապում։

— Այ կին, մի բան կա — զլուխն որորելով ասում եր հայրը։ — Ախր եսպես հանկարծ վհնց խելոքացան։

— Ենա մեծանում են. բա ուզում եյիր միշտ հիմա՞ր մնային։

— Զե, եղ չի, ուղղակի չեմ հասկանում, ի՞նչպես սրանք փոխվեցին։

— Վոչինչ, հասկանաս, բո զլուխն ամբողջապես թվանշաններով ե լցված. կհանես, կգումարես. կհանես, կգումարես... մեկ ել տեսար գտար, — հանաքին տալով ասաց կինը, ու յԵՐԿՈՒՄ ել ծիծաղեցին։

Հենց այդպես ել յեղափ.

Միքանի որ հետո, հաշվապահն աշխատանքից ուրախ ուրախ ուռւն վերադարձավ, ընկավ սենյակներն ու կնոջը նայերով՝ հարցրեց։

— Ուր են յԵՐԵԽԱՆԵՐԸ։

— Դեռ ուսումնարանից չեն յեկել... հը, ի՞նչ ե պատահել, — վախեցած վրա ընկավ կինը։

— Վոչինչ, վոչինչ, — զգալով իր անզգուշությունը, ժպտալով հարցրեց. — հը, ի՞նչ ե, վախեցար...»

— Դե ասա, սրտներս պատռեցիր...»

— Փող չպատռվի... այ, թե ինչ ե պատահել,

Ու սենյակում սկսեց պիոներների պես անց ու դարձ անել ու հետն արտասանել — մեկ, յԵՐԿՌԵ, մեկ, յԵՐԿՌԵ

— Այ մարդ, հո չես ցնդել, ավելի վախեցած խոսեց կինը, իսկ պառակի ծնկներն ուղղակի լըլըում եյին։

— Դե, հանգիստ նստեցեք և լսեցեք։

— Հանեցի — զումարեցի, զումարեցի, հանեցի ու զտա՝ և շատ գոհ եմ...»

— Մենք ինչ ենք ասում, զու ինչ ես խոսում... հապա յԵՐԵԽԱՆԵՐԸ...»

— Հա, հենց մեր յԵՐԵԽԱՆԵՐԻ մասին եմ խոսում մի փոքր համբերություն ունեցեք։

— Եսոր, ժամը տաս յԵՐԿՈՒՄ յես ու մեր կառավարիչը գնում եյինք Ռուսթավելու պարոտայով։ Հանդիպեցինք դիմացից յԵՐԿՈՂ պիոներներին նրանք թմբուկ եյին զարկում ու նվազում, գալիս եյին շարվե-շար հինգ հարյուր հոգի կլինեյին։ Առաջից ծածանվում եր կարմիր դրոշը և կենին մեծադիր պատկերը...»

— Նիկոլայ Սոլոմոնովիչ, — դարձավ ինձ մեր կառավարիչը, — զու չես կարող յԵՐԿՈՒՄ յերեակայել, թե ինչպես և հոգիս հրճվում, յԵՐԵ նայում եմ մեր այս մատաղ պիոներներին։ Նրանց վիթխարի յԵՐԹԸ, հաղթական հայացքը ուղղակի վողերում են ինձ, քիչ ե մնում թաշեմ ու յես ել նրանց հետ քայլեմ... Տանն իմ յԵՐԿՈՒ յԵՐԵԽԱՆԵՐԸ յԵՐԵ գալիս են կողեկտիվից, առաջս կանգնում են ու ասում. — «Միշտ պատրաստ». յես առնում եմ նրանց զիրկս ու անվերջ համբուրում.»



— Յերևի ձեր յերեխաներն ել են գրվել պիոներ...
— Այո... իհարկե, կմկմալով ասացի ու մտքում ունձ պախարակում եյի, վոր միշտ խոչընդուա եմ յեղել յերեխաներիս ցանկության Մեկ ել տեսնեմ կառավարիչը թեմիցս բաշում ե.

Նիկալայ Սոլոմոնովիչ, մի նայեր են զրոշը բռնած կարմրաթուշ աղջկանը, տես, ինչպես կուրծքը դուրս գցած, խրոխտ ու հպարտ անցնում ե.

Յես, ակամալից նայեցի. Նայեցի... և ի՞նչ... մեր Մարգոն. իսկ և իսկ մեր Մարգոն...

Պառավը և կինը տեղներիցը վեր թռան ու խիստիստ նայեցին.

— Նրա առջեցից ել թմբուկ խփելով գնում եր Արփոն... Աշըերիս չեյի ուզում հավատար, բայց նրանք եյին, վոր կային: Այլևս կասկած չկար.

— Եղ միջոցին պիոներները մոտեցան ու անցնում եյին մեր մոտով: Յես, սիրալիք ժպիար գեմքիս, կանչեցի Մարգոյին: Նա վախեցած՝ նայեց ինձ, ձեռքերը դողացին, քիչ եր մնում դրոշն ընկներ, բայց տեսնելով իմ ուրախ ժպիար, ինքն ել ծիծագեց ու շարունակեց իր յերթը: Այ, տեսնում եք. մեր յերեխաները մեզնից խելոք են յեղել.

Պառավն ու կինը զարմացած նայեցին իրար.

Այո, յես նրանց ճակատն ամուր պիտի համրութեմ...

Եղ խոսակցության միջոցին յերեխաները, կարմիր փողկապը կապը, պիոներական նշանը կրծքերին, ուղղակի ներս ընկան ու գոռացին. «Հայրիկ ջանս... ու ընկներով նրա գիրկը, փարմիցին վզովր»,

Հայրը սեղմեց նրանց իր կրծքին, համրութեց նրանց.

Մինչ տատիկն ու մայրիկն արձանացած պիտում

Եյին այդ պատկերը, Մարգոն փարվեց մոր վզովը, |
Արքոն—տատիկին:

Ապա նրանք կանգնեցին իրար կողքի, աջ ձեռք
բարձրացրին վեր և գոչեցին—«Միւս պատրաստ»:



ՀՀ Ազգային գրադարան



NL0399951

ԳԻՆԸ 60ԿՊԹ.

80

12195

603

1
2

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԽՈՍՀԻ ՊԵՏԱԿԱՆ
Ինստիտուտ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Հայաստան
Հայաստան
ՀՀ ՀՀ ՀՀ

ԽՍՀՄՆ Ն 1914 ԳՐԱՆԴ. Ն 6975 (Բ) ՏՐՈՒ 4000
ԿՐԱ. ԽՍՀՄՆ ՊԱՎԱՐ. Ն 5884

մ. ՊԵՏՐՕՍՅԱՆ
:ՎԸԵՐՃԱ ՊՈՏՈՎ: գիզ. ՀՀ. Ա. Շ. ԷՐԻՎԱՆԻ.